Նախագիծ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի -ի թիվ -Ն որոշման

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված ֆինանսական հաստատությունների կողմից կրիպտոակտիվով գործարքների առնչությամբ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը և ժամկետները» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ֆինանսական հաստատությունների կողմից Օրենքով սահմանված հաշվետվությունների տրամադրման կարգը և ժամկետները:

2. Սույն կարգով սահմանված հաշվետվություններ տրամադրելիս կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ են համարվում «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված անձինք, 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցելու թույլտվություն ստացած ներդրումային ընկերությունները, ներդրումային ֆոնդի կառավարիչները և կենտրոնական դեպոզիտարիան, ինչպես նաև բանկերը և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձինք՝ կրիպտոակտիվներով գործարքների իրականացման դեպքում:

3. Սույն կարգով սահմանված հաշվետվություններ տրամադրելիս արժեթուղթ է համարվում արժեթղթի կամ ածանցյալ ֆինանսական գործիքի սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվը:

4. Հաշվետվությունը ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում, այդ թվում՝ հաճախորդին պատկանող մեկից ավելի հաշիվներով կատարվող կրիպտոակտիվներով մեկ գործարքի դեպքում:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվության ներկայացման բացառություններ են կազմում հետևյալ գործարքները.

1) կրիպտոակտիվով ծառայություններ մատուցող անձանց կողմից կատարվող գործարքները, որոնց գումարը (հաճախորդին պատկանող մեկից ավելի հաշիվներով կատարվող կրիպտոակտիվներով մեկ գործարքի դեպքում՝ դրա հանրագումարը) չի գերազանցում 5 միլիոն դրամը.
2) ֆինանսական հաստատության կողմից սեփական կարիքների համար կատարվող կրիպտոակտիվով գործարքները, որոնց գումարը չի գերազանցում 20 միլիոն դրամը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) են տրամադրվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի (այսուհետ՝ Առցանց համակարգ) միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» պահանջների պահպանմամբ:

7. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոնին է տրամադրվում Առցանց համակարգի «Առցանց լրացում» տարբերակի միջոցով: Հաշվետվությունը կարող է տրամադրվել նաև Առցանց համակարգի «Վեբ-սերվիսով մուտքագրում» և «Վերբեռնում» տարբերակների միջոցով:

8. Հաշվետվությունը Առցանց համակարգով տրամադրելու անհնարինության դեպքում այն տրամադրվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ համաձայնեցված ձևով: Հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է

պայմանավորված լինել բացառապես Առցանց համակարգի խափանման հետ կապված ծրագրաապարատային և հաղորդակցման խնդիրներով:

9. Առցանց համակարգի վերագործարկումից հետո Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ համաձայնեցված ձևով տրամադրված հաշվետվությունները եռօրյա ժամկետում վերատրամադրվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնին՝ Կարգի 7-րդ կետով սահմանված կարգով:

10. Հաշվետվությունը «Վեբ-սերվիսով մուտքագրում» տարբերակով ներկայացնելու դեպքում հաշվետվության ստուգումն իրականացվում է երկու փուլով՝ առաջնային և վերջնական: Առաջնային ստուգման արդյունքները ֆինանսական հաստատությանն են ներկայացվում սխալի կամ առաջնային ստուգումը հաջողությամբ անցնելու վերաբերյալ պատասխան հաղորդագրությամբ: Առաջնային ստուգումը հաջողությամբ անցնելու դեպքում հաշվետվությունն անցնում է վերջնական ստուգման փուլ:

11. Վերջնական ստուգման ընթացքում հաշվետվության մեջ սխալի առկայության դեպքում հաշվետվությունը ստանում է «Մերժված» կարգավիճակ:

12. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե https://registry.fmc.am հղմամբ հասանելի Առցանց համակարգում հաշվետվությունը վերջնական ստուգման արդյունքում ստանում է «Ավարտված» կարգավիճակ: Վերջնական ստուգման արդյունքում «Մերժված» կարգավիճակ ստացած հաշվետվության ճշգրտված տարբերակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու դեպքում տվյալ հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Հաշվետվության վերջնական ստուգման արդյունքը ֆինանսական հաստատությանը հասանելի է նաև հաշվետվության վերջնական կարգավիճակի վերաբերյալ հարցման վեբ-սերվիսին հարցում կատարելու միջոցով:

14. Այն դեպքում, երբ ֆինանսական հաստատությունը պարզում է, որ Ֆինանսական դիտարկումների կենտրոնին տրամադրված գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ենթակա չէր պարտադիր տրամադրման, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

15. Հաշվետվությունը լրացվում է հայերեն լեզվով, մեծատառերով, առանց չակերտների, նշանների կոդավորման «յունիկոդ» ստանդարտին համապատասխան: «Անուն»/ «Անվանում», «Ազգանուն», «Հայրանուն», «Բնակության (գտնվելու) վայր», «Բնակության (գտնվելու) քաղաքը», «Բնակության (գտնվելու) մարզը», «Թողարկողի անվանումը» դաշտերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա այդ դաշտերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

16. Տրամադրվող հաշվետվությունը պետք է բավարարի Հավելված 2-ով սահմանված պահանջներին, ինչպես նաև xml հաշվետվության սխեմայում ներառված դաշտերի հնարավոր արժեքների թվայնացված աղյուսակներին: Ցանկացած հաշվետվություն, որը չի բավարարում նշված պահանջներին, սույն կարգի 12-րդ կետով սահմանված կարգով ստանում է «Մերժված» կարգավիճակը:

17. Յուրաքանչյուր պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տրամադրվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

18. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոնին է տրամադրվում գործարքը կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև երրորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ն:

19. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոնին է տրամադրվում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու օրը: